ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

Պրոֆ. Կ. Դ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում ստեղծել և զարգացրել է բարձր մշակույթ, որի ամենաարտահայտիչ ճյուղերից մեկը՝ ճարտարապետությունը մեզ է հասել մի քանի հազար հուշարձաններով։ Դրանցից շատերը տաճարներ, պալատական շինքեր, մատենադարաններ, ճեմարաններ, սեղանատներ, իջևաններ, բաղնիքներ, կամուրջներ, քաղաքներ, ամրոցներ և այլն, ունեն գիտական մեծ արժեք և պատվավոր տեղ են գրավում համաշխարհային ճարտարապետության գանձարանում։



Հայաստանում կառուցված ճարտարապետական հուշարձանները ուսումնասիրության առարկա են դարձել դեռևս XVIII դարում։ Եվրոպացի որոշ ճանապարհորդներ ու գիտնականներ արևելյան երկրներում կատարած ուղևորությունների ընթացքում հետաքրքրվել են նաև մի շարք հուշարձաններով և այդ մասին գրել ուղեգրական նոթերի կամ գիտական ուսումնասիրությունների մեջ[1]։ Բայց նրանք կարողացել են միայն հարևանցիորեն ծանոթանալ իրենց տեսած հուշարձանների հետ և այդ պատճառով էլ սկարագրել, իսկ երբեմն էլ չափագրել են դրանք բազմաթիվ սխալներով։

Հայաստանում ևս XVIII դարից սկսած, իսկ XIX դարում ավելի շատ երևան են գալիս այսպես կոչված տեղագրական ուսումնասիրություններ, որոնց (մեծ մասամբ հոգևորական) հեղինակները նկարագրել են իրենց շրջապատի պատմական հուշարձանները այն չափով, ինչքանով կարողացել են[2]։ Այս կարգի ուսումնասիրությունները արժեքավոր են նրանով, որ առաջին

---

[1] *Տե՛ս, օրինակ,* Brosset M., Rapports sur un voyage archeologique dans la Géorgie et l'Armenie, execute en 1847–1848, St. Petersbourg, 1849–1851. Dubois de Montpereaux, Voyage autour du Caucase, Paris, 1839–1843. Crimm D., Monument d'architecture en Georgie et en Armenie. St. Petersbourg, 1859–1864. Ker-Porter R., Travels in Georgia, Persia, Armenia, ancient Babylonia etc. etc. London, 1821. Texier Ch., Description de l'Armenie, la Perse et la Mesopotamie, Paris, 1842 *և այլն։*

[2] *«Աբրահամ Կաթողիկոսի Կրետացւոյ Պատմութիւն անցիցն իւրոյ և Նադր-Շահին պարսից», 1870, ի Վաղարշապատ, Հ. Մինաս վ. Բժշկյան, Ճանապարհորդութիւն ի Հնդաստան, Վենետիկ, 1830. Շահխաթունյանց Հովհ. եպ., Ստորագրութիւն կաթու-*

անգամ տեղեկություններ են տալիս բազմաթիվ հուշարձանների տեղի, բնույթի, վիճակի մասին. բայց գիտական տեսակետից դրանք մեծ արժեք չունեն, որովհետև հեղինակները մասնագետ ճարտարապետներ չեն եղել և չեն կարողացել գիտականորեն վերլուծել հուշարձանները կամ վեր հանել նրանց ճարտարապետական առանձնահատկությունները։

Թորոս Թորամանյանը, որի ծննդյան 100-ամյակը նշվում է այս տարի, առաջինն էր, որ իր ամբողջ կյանքը նվիրեց հայ ճարտարապետության սիստեմատիկ ուսումնասիրությանը։ Նա ոչ միայն ուղղեց օտար գիտնականների սխալ տեղեկությունները, այլև գիտության սեփականություն դարձրեց բազմաթիվ անծանոթ մեծարժեք հուշարձաններ և, որ գլխավորն է, կազմեց հայկական ճարտարապետության ծագման ու զարգացման շրջանների իր տեսությունը, որ մինչև այժմ, որոշ լրացումներով և ուղղումներով, ընդունված է գիտության կողմից։ Թ. Թորամանյանի ամենամեծ ծառայությունն այն է, որ նա հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմքը դրեց բուն Հայաստանում։

Դժվար էր Թորամանյանի աշխատանքը։ Նա ձեռքի տակ չուներ ոչ մի պատահելի չափագրություն, նույնիսկ չուներ մասնագիտորեն կատարված լուսանկար։ Ամեն ինչ ինքն էր կատարելու առաջին անգամ։ Այդ է պատճառը, որ նա մինչև իր կյանքի վերջին տարիները զբաղվեց միշտ նոր և նոր հուշարձաններ ուսումնասիրելով ու չափագրելով, ժամանակ չգտնելով արդեն ձեռք բերած նյութերը խմբավորելու և նրանց մասին հավաքական մի մեծ աշխատություն գրելու համար։ Այդ մեծ աշխատությունը նա միշտ հետաձգեց՝ տույս ունենալով, որ ապագայում կկարողանա կատարել, և մեծ եռանդ ու աշխատանք գործադրեց լույս աշխարհ հանելու անծանոթ մնացած շատ կառուցվածքներ։

Սակայն հայկական ճարտարապետական կոթողները այնքան շատ են, որ նրանցից ամենակարևորների ուսումնասիրության համար իսկ շատ կարճ է մի մարդու կյանքը։ Թորամանյանը երեսուն տարի շարունակ դաշտերում, լեռներում, ձորերում չափագրեց, անձամբ լուսանկարեց և հետազոտեց բազմաթիվ հուշարձաններ։ Միայն ձմռան ամիսներին էր կարողանում նա իր կատարած չափագրությունները մասամբ մաքրագրել կամ մի նոր ուսումնասիրություն գրել այս կամ այն հուշարձանի մասին, երբեմն էլ ընդհանուր կարգի տեսական բնույթի հետազոտություններ կատարել։ Կյանքի վերջին տարիներին, երբ արդեն չէր կարող շրջագայություններ կատարել, նա ուզեց համախմբել և մի ընդհանուր ուսումնասիրություն գրել հայկական ճարտարապետության մասին, բայց գործի դեռևս սկզբին այդ կարևոր աշխատանքն ընդմիշտ դադարեց հեղինակի վաղահաս մահվան պատճառով։

գիկ. էջմիածնի և հին գաւառացն Արարատայ, ս. էջմիածին, 1842, Ջալալյանց Սարգիս վ., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, 1842, մասն Բ, 1858, Տփխիս։ Մխիթարյանց Արել վ., Ճանապարհորդութիւն յԱնի, Կ. Պոլիս, 1865։ Մանկունի, Այրիվանք կամ Գեղարդավանք, Վաղարշապատ, 1871։ Մեղրակյան Ա. վ., Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու, Վաղարշապատ, 1872։ Սրվանձտյան Դ. Թորոս Ագրար, 1879, Կ. Պոլիս։ Բարխուդարյան Մ. եպ., Արցախ, Բարու, 1895։ Ալիշան Հ. Ղ. վ., Շիրակ 1881, Վենետիկ։ Այրարատ, Վենետիկ, 1890։ Սիսական, Վենետիկ, 1893, և այլն։

* * *

Թորոս Թորամանյանը ծնվել է 1864 թ. մարտի 18-ին Արևմտյան Հայաստանի Շապին-Գարահիսար քաղաքում։ Սկզբնական կրթությունն ստացել է իր ծննդավայրում։ 16 տարեկան հասակում, երբ ծնողներն արդեն մեռած էին, ծանոթների աջակցությամբ նա մեկնում է Կ. Պոլիս և, մի քանի տարի հյուսնի աշակերտ լինելուց հետո, 1888-ին ընդունվում Կ. Պոլսի գեղարվեստից ճեմարանի ճարտարապետական բաժինը, որն ավարտում է 1893 թ.։

Մասնագիտական կրթություն ստանալուց հետո Թ. Թորամանյանն սկզբում զբաղվում է նոր տների նախագծումներով Կ. Պոլսում և Բուլղարիայում, որտեղ կառուցել է մի քանի տներ ու մի պալատ։ Սակայն, Թորամանյանին բոլորովին չէր հրապուրում ճարտարապետական ընթացիկ շինարարությունը, նա ձգտում էր դառնալ ճարտարապետության տեսաբան։ Այդ նպատակով էլ 1900 թ. նա այցելում է դասական ճարտարապետության մի քանի երկրներ՝ Հունաստան, Եգիպտոս, Իտալիա։ Այնուհետև գնում է Փարիզ՝ իր մասնագիտության մեջ կատարելագործվելու նպատակով։ Այստեղ, իբրև աղատ ունկընդիր, լսում է մեծանուն գիտնականների, ուսումնասիրում դասական արվեստն ու ճարտարապետությունը, թանգարաններում զբաղվում արևելյան երկրների հնագիտական առարկաների ուսումնասիրությամբ։

1903 թ., երբ Թորամանյանը դարձյալ Բուլղարիա էր վերադարձել շինարարական գործնական աշխատանքներով զբաղվելու համար, փարիզաբնակ հայագետ Կարապետ Բասմաջյանը չորս ամսով հրավիրեց նրան մասնակցելու մասնավոր կարգով դեպի Անի կազմակերպվելիք արշավին, ըստ որում Բասմաջյանը պետք է զբաղվեր վիմական արձանագրությունների վերծանմամբ ու հնագիտական ուսումնասիրություններով, իսկ Թորամանյանը՝ ճարտարապետական հուշարձանների չափագրությամբ։ Այսպիսով, 1903 թ. Թորամանյանն առաջին անգամ եկավ Անի և հիմք դրեց իր այնքան բեղմնավոր գիտական գործունեությանը։

Մինչև Հայաստան գալը Թորամանյանը չէր պատկերացնում այն աշխատանքի ծանրությունը, որ հանձն էր առել կատարել չորս ամիսների ընթացքում։ Սակայն շուտով համոզվեց, որ դա ոչ թե չորս ամիսների, այլ տասնյակ տարիների գործ է։ Եվ նա այնքան սիրեց և իր հոգուն ու ձգտումներին մոտիկ զգաց այդ աշխատանքը, որ որոշեց այլևս չվերադառնալ Եվրոպա՝ արհամարհելով ամեն տեսակի նյութական զրկանքները։ Բացակայում էր նաև կիտական աշխատանքի տրամադրող միջավայրը ո՛չ միայն Հայաստանում, այլև Անդրկովկասի խոշոր կենտրոններում ևս՝ Թբիլիսիում և Բաքվում։ Բայց այդ դժվարին պայմաններում էլ նա սրբությամբ իրագործեց մինչև կյանքի վերջը պատմական ճարտարապետության ուսումնասիրությամբ զբաղվելու մասին իր որոշումը։

1904 թ. Խաչիկ վարդապետ Դադյանը, որ պեղումներ էր կատարում Զվարթնոցում, Թորամանյանին հրավիրեց տաճարի հատակագիծն ու վերակազմությունը կատարելու։ Մի տարի անց «Մուրճ» ամսագրի № 5-ում լույս տեսավ Թորամանյանի անդրանիկ հոդվածը՝ նվիրված Զվարթնոցի տաճարի վերակազմությանը։

1904 թ. հունիսի վերջերին Թորամանյանը մեկնեց Անի՝ մասնակցելու պրոֆ. Ն. Մառի գլխավորությամբ կատարվող պեղումներին և երկար տարիներ մնաց այնտեղ՝ քաղաքի և նրա շրջապատի հուշարձանների ուսումնասի-

րության նպատակով։ Անին՝ իր բարձրարվեստ ճարտարապետական կոթողներով, անակնկալ նորություն էր Թորամանյանի համար «այնքան գեղարվեստական թանկագին գոհարներով լեցուն անկյուն մը, որ իրը օվազիս, Արևելքի հնագարյան խավարի մեջ ծլած ու ծաղկած էր»[3]։

Անիում Թորամանյանը հանդիսացավ Ն. Մառի ամենակարևոր աշխատակիցը և իր ուսումնասիրություններով մեծ չափով կարողացավ բարձրացնել գիտնականների աչքում Անիի պեղումների գիտական արժեքը։ Երիտասարդ ճարտարապետը շատ սիրեց Բագրատունի թագավորների գեղեցիկ, բայց ամայի մայրաքաղաքը։ «Անին նրա համար ապրող, շնչող իրականություն էր։ Անիի անցյալը նրա աչքում կենդանի ներկա էր. նա տեսնում էր անցած իրերը, դեպքերը, պատկերները։ Լսում էր անցյալի ձայնը, զգում էր անցյալը»,—գրել է իր հուշերում մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը՝ Թորամանյանի մտերիմ բարեկամը։

Անիում աշխատելու տարիներին Թորամանյանի կյանքում մեծ դեր խաղաց պրոֆ. Մառը։ Թորամանյանն ինքը բազմիցս նշել է Մառի խոշոր դերը իր գիտական ուսումնասիրություններն արժեքավորելու և իրեն հովանավորելու գործում։ Իր հոդվածներից մեկում ճարտարապետը գրել է, որ Մառի «հովանավորության տակ խաղաղ ու ապահով կատարեցի ոչ միայն ինձի, այլև համայն գիտական աշխարհի համար շահեկան մի մեծ գործ»[5]։

1909 թ. Մառի ջանքերով Պետերբուրգում կազմված Գիտությունների կայսերական ակադեմիայի հանձնաժողովը, որին մասնակցում էին արևելագետ և ճարտարապետ հեղինակավոր ակադեմիկոսներ, քննելով Թորոս Թորամանյանի չափագրությունները, բարձր գնահատեց դրանք և Թորամանյանի աշխատանքի շարունակությունն Անիում համարեց չափազանց օգտակար գիտության և արվեստի համար[6]։ Անդհանրապես Թորամանյանի բոլոր գործերն արժանի են բարձր գնահատականի, որովհետև կատարված են մեծ բարեխղճությամբ և մանրակրկիտ ճշտությամբ։

Անին Թորամանյանի կյանքում ունեցավ նաև մի այլ կարևոր նշանակություն։ Հարցն այն է, որ այդ պեղումները Կովկասի իրականության մեջ բացառիկ երևույթ էին և, իրականում, Անին մի դպրոց էր Կովկասի հնագիտության համար, որտեղ Մառի աշակերտները, ինչպես նաև շատ ուրիշներ, ձեռք էին բերում հմտություն և աշխատանքի փորձ։ Եթե Թորամանյանը Անիում իր աշխատանքն սկսեց մեն-մենակ, առանց որևէ նեցուկի, ապա հետագա տարիներին, երբ մասնակցում էր պրոֆ. Մառի պեղումներին, հետզհետե ձեռք բերեց գործի լավագույն ընկերներ և աշխատանքի ջերմ մթնոլորտ։ Անիում Թորամանյանը մտերմացավ Հովսեփ Օրբելու, Գրիգոր Զափանցյանի, Աշխարհբեկ Քալանթարի, գերասան և լուսանկարիչ Արամ Վրույրի և շատ ուրիշների հետ, որոնք մշտապես մնացին նրա բարեկամները։

Հին կարգերի օրով Թորամանյանը կանգնած էր նաև մի այլ անհաղթահարելի դժվարության առաջ, որը մեծ չափով խանգարում էր նրա ուսումնասիրությունների պատշաճ կերպով լույս աշխարհ գալուն։ Ինչպես հայտնի է,

3 Քաղել Ենք Թորամանյանի Ձեռագրերից։

4 Ավ. Իսահակյան, Ճարտարապետ Թորոս Թորամանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 39։

5 «Մշակ», 1908, № 60։

6 «Բյուզանդիոն», 1908, № 3717 և «Ախուրյան», 1908, № 85։

ճարտարապետական ուսումնասիրությունները պահանջում են մեծ դիրքով և պատկերազարդ հրատարակություն։ Այն ժամանակ այդպիսի պարբերականներ չկային հայերեն լեզվով, իսկ առանձին գրքեր տպագրելն էլ գրեթե անհնարին էր, որովհետև միայն բացառիկ դեպքերում կարելի էր գտնել առատաձեռն հարուստ մեկենաս, որը հանձն առներ տպագրական ծախսերը։ Սովորաբար Թորամանյանն իր աշխատությունները տպագրում էր ընկերների Արամ Վրույրի Բատերական «Հուշարար» և Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստ» պարբերականներում, ինչպես նաև Երվանդ Լալայանի խմբագրությամբ լույս տեսնող «Ազգագրական հանդես»-ի, Արշակ Չոպանյանի «Անահիտ»-ի մեջ։ Բոլորն էլ ոչ մասնագիտական պարբերականներ էին, և այդ պատճառով էլ Թորամանյանի հոդվածները չունեն անհրաժեշտ թվով չափագրություններ և լուսանկարներ։ Նա գրել է նաև լրագրերում («Մշակ», «Ախուրյան») կամ իր գործերը հրատարակել փոքրիկ գրքույկներով, առանց չափագրության և լուսանկարների։

Առաջին համաշխարհային պատերազմի նախորյակին վիեննացի պրոֆեսոր Հովսեփ Ստրժիգովսկին ցանկություն հայտնեց Թորամանյանի հետ միասին մի մեծ աշխատություն գրել հայկական ճարտարապետության մասին, ներկայացնելով միաժամանակ հայկական ճարտարապետության գլխավոր կոթողները և զարգացման հիմնական շրջանները։ Թորամանյանը ընդունեց նրա առաջարկը և իր հետ Վիեննա տարավ բազմաթիվ չափագրություններ ու գծագրություններ։ Պրոֆ. Ստրժիգովսկին պատերազմի տարիներին Թորամանյանի չափագրությունների հիման վրա գրեց մի ստվար ուսումնասիրություն և 1918 թ. հրատարակեց երկու մեծադիր հատորներով, որոնց մեջ խիստ մեծարում է Թորամանյանին և պատշաճ գիտական բարձր արժանիքներ վերագրում նրա բոլոր գործերին։

Թ. Թորամանյանը աշխատանքի և գիտական գործունեության բեղմնավոր ժամանակաշրջան ապրեց Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո։ 1920 թ. նա ընտրվել է Էջմիածնի գիտական ինստիտուտի իսկական անդամ, 1923—1930 թթ. աշխատել է հնությունների պահպանության կոմիտեում (որի նախագահը Ալեքսանդր Թամանյանն էր), իսկ 1931—1932 թթ.՝ Պատմական թանգարանում իբրև ճարտարապետական բաժնի վարիչ։ Թորամանյանն իսկական անդամ ընտրվեց Գիտության և արվեստի, հետագայում էլ Կուլտուրայի պատմության և Պատմության ու գրականության ինստիտուտների։

Սովետական իշխանության տարիներին, սկսած 1921 թվականից, Թորամանյանն իր ուսումնասիրության կենտրոնը Անիից տեղափոխեց Արագածի լանջերը և Արարատյան դաշտավայրը։

1934 թ. սկզբներին տոնվեց Թորամանյանի գիտական գործունեության 30-ամյակը։ Հայաստանի կառավարությունը նրան շնորհեց գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում։ Մեծ գիտնականը վախճանվեց 1934 թ. մարտի 1-ին, յոթանասուն տարեկան հասակում։

Պատմության ինստիտուտը և Պետական պատմական թանգարանը երկու ստվարածավալ հատորներով հրատարակեցին բազմավաստակ գիտնականի ինչպես մինչ այդ տպագրված, այնպես էլ ձեռագիր վիճակում մնացած աշխա-

տությունները[7]։ Շուտով այդ երկու հատորներին ավելանալու է նաև երրորդը, որն ընդգրկելու է հեղինակի չափագրական բոլոր կարևոր աշխատանքները։

* * *

Թ. Թորամանյանը գիտեր իր ուսումնասիրած հուշարձանների բոլոր առանձնահատկություններն ու մանրամասնությունները, ճանաչում էր յուրաքանչյուր քարը և յուրաքանչյուր քանդակաձևը։

Նրա աշխատանքներն ընթացել են երեք տարբեր ուղղությամբ.

ա. Ճարտարապետական շենքերի չափագրություն և վերակազմություն.

բ. Հայկական ճարտարապետության տեսական հարցերի մշակում.

գ. Պեղումներ և հնագիտական շրջագայություններ։

ա. Ճարտարապետական շենքերի չափագրություն և վերակազմություն

Թ. Թորամանյանն իր չափագրությունները կատարում էր երկու կերպ. մեկը շատ մանրամասն, բազմաթիվ գծագրերով, մյուսը՝ համառոտ։ Նա մանրամասն չափագրում էր այն հուշարձանները, որոնք որոշ տեսակների, որոշ խմբերի լավագույն օրինակներն են։ Նրա այդ չափագրությունները այսօրվա ընդունված չափագրության եղանակներից գրեթե ոչնչով չեն տարբերվում։ Ճակատները կազմելու ժամանակ Թորամանյանը մի տեղում չափում էր յուրաքանչյուր շարքի բարձրությունը, հիմքից մինչև կտուրը և միայն մեկ շարքի քարերի լայնությունը, իսկ մյուս քարերի լայնությունը գծագրում էր աչքաչափով, միշտ համեմատության դնելով չափագրված շարքի քարերի հետ։ Դժբախտաբար Թորամանյանի գծագրերի ամբողջության մասին այսօր չենք կարող ճիշտ գաղափար ունենալ, որովհետև նրա ժողովածուի մի մեծ մասը կորավ 1919 թ., երբ թուրքական զորքերը մտան Ալեքսանդրապոլ։ Մնացած մասը խնամքով պահպանվում է 72 ծրարների մեջ, մոտ 500 թերթի վրա։

Թորամանյանը շատ տեղերում է կատարել մանրամասն չափագրություններ։ Առաջին հերթին պետք է հիշատակենք Անի քաղաքի Սմբատյան պարիսպները, որոնց երկարությունը 2500 մետր է, բարձրությունը՝ 10—12 մետրը, թանձրությունը՝ մեկ մետր։ Ամբողջապես շարված են սրբատաշ տուֆ քարով, թե դրսից և թե ներսից, քարի ու կրի շաղախով մածուցված։ Այդ պարիսպները ժամանակին եղել են անառիկ և միաժամանակ հանդիսացել են քաղաքի գլխավոր դարդերից մեկը։ Բազմաթիվ աշտարակները, գույնզգույն քարերի զանազան ձևերով շարվածքները, զուսպ, բայց մեծ ճաշակով կատարված որմնազարդերը և, վերջապես, քաղաքի կամարակապ դռները վեհություն և մեծ շուք են տվել պարսպին։ Այդ պարիսպները Թորամանյանը գծագրել է մեծ ճշտությամբ, 25 թերթի վրա, բազմաթիվ վերստուգիչ կետերի օգնությամբ։

Անիի ճարտարապետության գլուխգործոցը տրդատաշեն կաթուղիկե մայր եկեղեցին է, որի չափագրությունները Թորամանյանի դիվանում պահվում են 21 թերթի վրա, բազմաթիվ մանրամասնություններով։

---

7 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության։ Ժողովածուն կազմեց ավագ գիտ. աշխ. Կարո Ղաֆադարյան, ընդհանուր խմբագրությամբ՝ ակադ. Հովսեփ Օրբելու։ Երևան, 1942, էջ XXV—403։ Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության։ Աշխատությունների երկրորդ ժողովածու, կազմեց և խմբագրեց Կ. Ղաֆադարյան, աշխատակցությամբ Ն. Թորամանյանի։ Երևան, 1948, էջ XIV—308։

Դիվանում, հավանաբար անկորուստ, պահպանվել են Հոռոմոսի վանքի մանրամասն չափագրությունները՝ 64 թերթի վրա, կատարված ամենայն բծախնդրությամբ։ Մանրամասն չափագրություններ ունեն Անիի բոլորակ Ս. Գրիգոր (գագկաշեն) եկեղեցին, Տիգրան Հոնենցի բազմաքանդակ տաճարը, Աղջկաբերդի, Միջնարերգի և Առաքելոց եկեղեցիները, ինչպես նաև Տեկորի տաճարը, Զվարթնոցը և ուրիշ կարևոր հուշարձաններ։

Թորամանյանն իր ճամփորդությունների ընթացքում կատարել է նաև զանազան մեծ և փոքր ճարտարապետական կառուցվածքների համառոտ չափագրություններ։ Այս դեպքում նա բավարարվել է մեծ մասամբ հատակագծով, արտաքին ճակատով, մեկ կտրվածքով և երբեմն էլ՝ մի թերթի վրա զանազան մանրամասնություններով։ Այդ եզանակով նա գրի է առել մի խումբ հուշարձանների հիմնական հատկանիշները, որոնցով բնորոշվել է նրանց ոճը։ Այդպիսի չափագրություններ ունեն Մարմաշենի, Արթիկի, Մաստարայի, Ալամանի, Եղվարդի, Լմբատի, Քասաղի, Երերույքի տաճարները և շատ ուրիշներ։

Թորամանյանը ոչ միայն բարձրարվեստ չափագրող էր ու նկարող, այլև շենքերի մնացորդների հիման վրա, գրեթե մաթեմատիկական ճշտությամբ, վերակազմելու և շենքի կանգուն վիճակի պատկերը տալու մեծ վարպետ։ Այդ ասպարեզում նա մինչև այսօր մրցակից չունի։ Նրա կատարած այդ տիպի աշխատանքների գլուխգործոցը միշտ կմնա. Զվարթնոցի տաճարի հոյակապ վերակազմությունը, ինչպես արտաքին եռահարկ տեսքի, այնպես էլ տաճարի կառուցվածքային ձևերի հստակ պատկերացումով։ Զվարթնոցի վերակազմության Թորամանյանի նախագիծն իր ժամանակին ենթարկվեց սուր քննադատության։ Քննադատողներն էին ճարտ. Քրիստ. Տեր-Սարգսյանը, Մեսրոպ վ. Տեր-Մովսիսյանը, Խաչիկ վ. Դադյանը և ուրիշներ։ Սակայն, հետզհետե հաստատվեց Թորամանյանի վերակազմության ճշտությունը, մանավանդ 1905—1906 թթ. հետո, երբ Անիում պեղմամբ բացվեց Զվարթնոցի օրինակով ու չափերով կառուցված Ս. Գրիգոր գագկաշեն եկեղեցին, որտեղ, բացի կառուցվածքային բազմաթիվ ապացույցներից (որոնք հաստատում էին Թորամանյանի վերակազմության ճշտությունը), գտնվեց նաև Գագիկ Բագրատունու արձանը՝ ձեռքին բռնած եռահարկ տաճարի փոքրադիր օրինակը, ճիշտ այն ձևով, ինչ ձևով Թորամանյանը վերակազմել էր Զվարթնոցը։ Այս ամենը մեծ չափով բարձրացրին Թորամանյանի հեղինակությունը։ Գիտությունների ռուսական ակադեմիան, հանձինս ակադեմիկոսներ Ն. Մառի, Գ. Զալեմանի, Ն. Կոնդակովի, Ս. Օլդենբուրգի և ճարտարապետության համառուսաստանյան ակադեմիան, հանձինս ակադեմիկոսներ Ն. Սուլտանովի և Մ. Պրեոբրաժենսկու, ինչպես և արևմտաեվրոպական բազմաթիվ գիտնականներ, անվերապահորեն ընդունեցին Թորամանյանի՝ Զվարթնոցի և Գագկաշենի վերակազմությունները։ Այժմ էլ Սովետական Միության մեջ և արտասահմանում ընդունված են Թորամանյանի տեսակետները[8]։

---

[8] «Всеобщая история архитектуры», М., 1958, էջ 427, Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 133—139. А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, М.—Л., 1950, էջ 33—37. В. М. Арутюнян и С. А. Сафарян, Памятники армянского зодчества, М., 1951, էջ 43—45։ Այդ բոլորին հակառակ, պրոֆ. Ա. Վ. Կուզնեցովը իր մի աշխատության մեջ ներկայացրել է Զվարթնոցի վերակազմության մի նոր ձև, որտեղ տաճարի երկրորդ հարկարաժինը ոչ թե բոլորակ, այլ խաչաձև է։ Այս տեսակետի ջերմ պաշտպան դարձավ ճարտ. թեկնածու Ստ. Մնացականյանը, որ սկզբում «Սովետական արվեստ» ամսագրում (1957, № 1) և հետագայում էլ գիտությունը-

Թորամանյանի փորձված աչքը ամեն տեղ հուշարձանների վրա որոնել և գտել է հին ու նոր մասեր, վերակառուցումների և վերանորոգության հետքեր։ Անիում նա վերակազմեց Առաքելոց եկեղեցու գավիթը, Հովվի գողտրիկ եկեղեցին, Անիի աշտարակավոր մեծ կամուրջը։ Թորամանյանն իր մենագրական մեծ աշխատության մեջ Տեկորի տաճարը ներկայացրեց V դարի տեսքով, ազատելով նրան հետագայի բոլոր տեսակի հավելվածներից և փոփոխություններից։

Թորամանյանի լավագույն վերակազմությունների թվին է պատկանում նաև XIII դարում Անի քաղաքի մեջ կառուցված Բախտաղեկի տոհմական տաճարը, որ բոլորովին ավերակ ու փլատակված վիճակում Ն. Մառը պեղել էր դեռևս 1892 թ.։ Այդ տաճարն իր քանդակազարդ դոտիով ու արտաքին տեսքով նման է Հոռոմոսի եկեղեցուն և իր ժամանակի հայ արվեստի լավագույն նմուշներից մեկն է եղել։

բ. Հայկական ճարտարապետության տեսական հարցերի մշակում

Թորամանյանն Անիում աշխատած տարիներին մշակեց և առանձին հոդվածներով հրատարակեց հայկական ճարտարապետության զարգացման իր տեսությունը։ Բազմաթիվ փաստերով և վկայություններով նա ցույց տվեց, որ մեր ճարտարապետությունն ինքնուրույն ազգային ձև է ստանում միջնադարից մեզ հայտնի հնագույն նմուշների մեջ, այսինքն IV—V դարերում և հիմնված է եղել տեղական ավանդական ոճերի վրա։

Հայկական ճարտարապետությունն ունեցել է իր վերելքներն ու անկումները։ Առաջին խոշոր վերելքը տեղի է ունեցել IV—V դարերում, Արշակունի հայ թագավորների օրով, երբ Մեսրոպ Մաշտոցի ձեռքով ստեղծվեցին հայկական գրերը։ Մշակութային այդ ընդհանուր վերելքի անքակտելի մասն է կազմել նաև ճարտարապետական արվեստի բուռն վերելքը։ Այդ ժամանակ Հայաստանում կառուցվեցին բազմաթիվ եռանավ և միանավ բազիլիկ շենքեր և գմբեթավոր դահլիճներ (Էջմիածին, Երերույք, Ղվինի կաթողիկե, Քասաղ, Աշտարակի Ծիրանավոր և այլն)։

Հայկական ճարտարապետությունը, ըստ Թորամանյանի տեսության, զարգացման բարձր կետին է հասնում իր երկրորդ վերելքի ժամանակ, VII դարում, մարզպանության ենթակա մասում, երբ Հայաստանում կառուցվեցին բազմաթիվ հոյակապ տաճարներ, որոնց թվում՝ Զվարթնոցը, Թալինի կաթողիկեն, Ավանը, Հռիփսիմեի տաճարը, Մրենը, Լմբատավանքը, Արթիկը և այլն։ Այս ժամանակ էր, որ մշակվեցին հայկական ճարտարապետության հատակագծային գրեթե բոլոր բարդ ձևերը։

Երրորդ մեծ վերելքը տեղի է ունեցել Բագրատունի թագավորների օրով, X—XI դարերում, երբ Հայաստանում կառուցվեցին երկկենտրոն կամարներով և այլ ոճերով այնպիսի սքանչելի շենքեր, ինչպիսիք են Անիի Մայր եկեղե-

---

ների ակադեմիայի «Տեղեկագրում» (1959, № 4, 1959, № 9) պաշտպանեց պրոֆ. Կուզնեցովի տեսակետները։ Մնացականյանի տեսակետների քննադատությունը տե՛ս ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 7, էջ 69—75։ Ճարտ. Տիրան Մարությանն իր «Զվարթնոց» աշխատության մեջ ընդունելով Թորամանյանի կարծիքը, քննադատեց Ս. Մնացականյանին, բայց հնարավոր համարեց, որ երկրորդ կամ երրորդ հարկաբաժնի լուսամուտները կարող են երկարաձիգ չլինել, այլ բոլորակ, որ բոլորովին տրամաբանական չէ, դատելով այդ լուսամուտների կողքի երկարաձիգ որմնաձարդերից։

ոին, Արդինան, Սանահնի և Հաղբատի գլխավոր տաճարները, Հովվի եկեղեցին, Աղթամարը և այլ բազմաթիվ մեծ ու փոքր հուշարձաններ։

Հայկական ճարտարապետությունը մի նոր վերելք ապրեց XIII դարում, երբ Զաքարյան եղբայրները հայ և վրաց միացյալ զորքերով դուրս քշեցին սելջուկ թուրքերին և Հայաստանում հաստատեցին խաղաղություն։ Այդ ժամանակ կառուցվեցին բազմաթիվ ճարտարապետական հուշարձաններ՝ ներսից ու դրսից շռայլորեն զարդարված։ Այդ շրջանի համար բնորոշ կոթողներ են Տիգրան Հոնենցի տաճարը Անիում, Հովհաննավանքը, Սաղմոսավանքը, Տեղերը, Հառիճավանքը, Գեղարդը, Հոռոմոսը։ Այդ շրջանի կառուցվածքների մեջ կարևոր տեղ են գրավում ժամատները և զանգակատները, իրենց գլուխգործոցը հանդիսացող Հաղբատի կրկնակամար ժամատան և նույն վանքի եռահարկ զանգակատան հետ միասին։

XIII դարի 30-ական թվականներից սկսած երկար դարեր մեր ճարտարապետությունը, մոնղոլական տիրապետության տակ, գնաց դեպի անկում, գրեթե մինչև սովետական իշխանության հաստատումը, բացառությամբ XVII դարի, երբ մի փոքր աշխուժացում էր տեղի ունեցել։

Թորամանյանի առաջադրած այս տեսությունը սերտորեն կապված է երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական անցուդարձի հետ և հիմնավորված է պատմական բազմաթիվ փաստերով։ Հետաքրքիրն այն է, որ բոլոր վերելքների շրջաններում բացակայել են օտարերկրյա կեղեքիչները, իսկ անկումային շրջանները առաջ են եկել արաբների և հետագայում էլ մոնղոլ-թուրքերի տևական բռնապետության հետևանքով։

գ. Պեղումներ և հնագիտական շրջագայություններ

Թ. Թորամանյանը, ինչպես ասացինք, բացի ճարտարապետական ուսումնասիրություններից զբաղվել է նաև հնագիտական աշխատանքով և պեղումներով։ 1904 թ., իր չափագրություններին զուգընթաց, նա ստիպված էր պեղել Զվարթնոցի որոշ մասերը, որոնք կիսատ էր թողել Խաչիկ վարդապետը՝ կարևորություն չտալով դրանց։ Անիում Թորամանյանը երկար տարիներ զբաղվեց պեղումներով՝ Ն. Մառի անմիջական ղեկավարության ներքո։

Հետագայում ևս, Սովետական իշխանության տարիներին, երբ նա Ալ. Թամանյանի գլխավորած հնությունների պահպանության կոմիտեի աշխատակից էր, մի շարք ուղևորություններ և մանր պեղումներ է կատարել Հայաստանի տարբեր շրջաններում։ Այսպես օրինակ՝ 1924 և 1927 թթ. նա պեղել և Երևան է տեղափոխել Լենինականի ավազահանքերում հայտնաբերված բրածո մամոնտի ոսկորները, 1927—1930 թթ. ընթացքում Զվարթնոցի և Հռիփսիմեի վանքերի շրջակայքում պեղել է բազմաթիվ դամբարաններ, որոնք պատկանել են մեր թվականության սկզբներին։ 1931 թ. Թորամանյանը մասնակցեց այսպես կոչված հին Վաղարշապատի պեղումներին և ղեկավարեց Զվարթնոցի հարավակողմի պեղումները։ 1932 թ. նա մասնակցեց պրոֆ. Հակոբ Զորյանի գլխավորած Գեղարդաձորի պեղումներին, որտեղ բաց արեց մի քանի բնակելի այրեր՝ ճարտարապետորեն գեղեցիկ ձևավորումով։

Թորամանյանը բազմաթիվ հնագիտական շրջագայություններ է կատարել Արագածի լանջերին և Շիրակում, որոնց արդյունքները տպագրվել են նրա աշխատությունների երկրորդ ժողովածուում։ Նա վաստակ ունի նաև թանգա-

բանագիտության բնագավառում. 1930 թ. Կոկտեր-պատմական թանգարանում նա հիմնադրեց ճարտարապետական բաժին և երկու տարի ղեկավարեց նրա աշխատանքները։ Նա մեծ ջանք գործադրեց Զվարթնոցում թանգարան հիմնելու համար, որը կառուցվեց նրա մահվանից հետո, 1937 թ.։

Այսօր, սովետահայ բազմաթիվ գիտնական ճարտարապետներ, համախմբված Հայաստանի գիտական հաստատություններում, շարունակում են մեծ գիտնական Թորոս Թորամանյանի հիմնադրած գործը և միշտ երախտագիտորեն ու հարգանքով են հիշատակում նրա փայլուն անունն իրենց նոր աշխատություններում։ Թորամանյանի աշխատությունները դեռևս երկար տարիներ կհանդիսանան հայկական ճարտարապետությունն ուսումնասիրողների և մեր անցյալի պատմաբանների սեղանի գրքեր։

ТОРОС ТОРАМАНЯН

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Резюме)

Систематическое научное изучение исторической архитектуры Армении тесно связано с именем Тороса Тораманяна, столетие со дня рождения которого исполняется в этом году. Свою жизнь Тораманян целиком посвятил изучению памятников средневековой архитектуры Армении IV—XIV вв. 30 лет он безустанно изучал и обмерял многие памятники армянского зодчества и прилагал все усилия к тому, чтобы свои работы были доброкачественными, точными и художественными. Еще в 1909 г. специальная комиссия Всероссийской Академии наук, с участием видных академиков, высоко оценила работы Тораманяна.

Тораманян начал свою деятельность в 1903 г. в Ани. В 1904 г. он принял участие в раскопках развалин круглого храма — Звартноца, построенного католикосом Нерсесом Строителем в VII в. около Эчмиадзина. В своих чертежах Тораманян дал реконструкцию храма до его разрушения. С 1904 г. Тораманян много лет работал в Ани в качестве архитектора анийской археологической экспедиции под руководством проф. Н. Я. Марра, которому он очень многим обязан.

После установления Советской власти в Армении Тораманян принял деятельное участие в деле охраны памятников древности, а также продолжал изучение памятников архитектуры на склонах горы Арагац и в Араратской долине. В 1934 г., в связи с тридцатилетием научной деятельности Тораманяна, ему было присвоено почетное звание заслуженного деятеля науки Армянской ССР. В последние годы своей жизни Тораманян подготовлял капитальный труд по истории армянской архитектуры. Однако смерть прервала эту работу.

Основные работы Тораманяна были опубликованы Академией наук Армянской ССР посмертно, под заглавием «Материалы по истории армянской архитектуры». Первый том вышел в свет в 1942 г., второй — в 1948-м, а третий готовится к печати.